

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ալիշան ճետը Ղեւոնդ, մե՛ծ իր սրտով
Ու ֆանֆարով անյատակ,
Ցցուեցաւ ժանտ Գարուսի դէմ, անվրդ՝վ,
Ըզգեցած՝ վուշն ըսպիտակ:

Ծերուկն ի տես անոր՝ շեշտով ապրտամբ՝
Ձայնեց. «Իմ նաւըս փոքր է.
«Թող Նահապետը, Նահվէի գորութեամբ,
«Գարո՛ն երկինք փոխադրէ.

«Յիմարութիւն ըրի անգամ մը արդէն, —
«Արիստոտէլն անցուցի,
«Ու քիչ մընաց՝ կըլանուէինք անդունդէն,
«Ես ալ, մակոյկս ալ հացի»:

* * *

... Գարրիէլ բիլ հրեշտակն ընդհուպ իջաւ ցած,
Անհուններէն լուսախայտ,
Դրկեց փերթոյն, ու լայն քեւերը բացած՝
Նդաւ օդին մէջ անյայտ:

* * *

Զինջ Նահապետը շրջեցաւ յաւիտեան,
Այլ իր կուրծքին մէջ արբուն՝
Զըմարեցաւ հայրենական բաղձութեան
Բազմարծարծ բոցը փաղփում:

Վառ էր հոգին միշտ հայրենի դաշտերուն
Ծաղիկներով գունագեղ.
Կը շողշողար այնտեղ ցոլփովն իր քթուն
Արեւին լոյսը շրքեղ.

Կը ցցուէին դարաստաններ հեռածիր,
Մեծ բարտիներ ու շռներ.
Սօսեաց անտառն հոն, սօսափով անձանձիր,
Ահեղօրէն կը ճօնէր.

Կը հոսէին բիւր վըտակներ հայրենի,
Ակունքներ ջինջ ու յստակ,
Վընիտ ջուրերն երկնաբընակ Սեւանի՝
Ալիքներով կապուտակ.

Ամէն մէկ քար այնտեղ մատուց մըն էր կոյս,
Նըւիրական, մաքուր, մուրք.
Ամէն մէկ սար տաճար մըն էր երկնասոյգ,
Գմբէքներով սէգ ու սուրք.

Քառաշտարակ էջմիածինն էր կանգուն՝
Գառնիի փուլ փառին քով.
Արմենական հանճարն՝ առո՛յգ եւ անքուն. —
Գեղարդն՝ իր ձո՛յլ հըրաշքով.

Տըլտուր ճեմով կը սահէր գետն Ախուրեան,
Ալեծըփուն ու խըռով.
Կը հիւսէր ողբն Անին իր սեւ հեծուքեան՝
Անասելի մոմուռով:

Համագրաւուած՝ դըրախտանիստ ու բուրեան
Որորանով արփավառ՝
Կ'արշաւէին հիր ալիքներն իր արեան
Անոր քովիչ ծիրն ի վար.

Ամէն բոպէ կը սպասէր լուր մ'«այնտեղէն»՝
Մեղմուղ՝ կոտտանքն իր վէրքին.
Զայն կը սփոփէր բալասանն այդ ոգեղէն,
Կ'ամոհէր խոցն իր ներքին.

Տապեցաւ միշտ այդ կարօտով հըրարծարծ.
Սիրտն այրեցաւ գերդ բուրվառ.
Տիւ ու գիշեր երազեց սուրբ հողն իր հարց՝
Երանութեան՝ գերդ գաւառ:

* * *

Ադրիական ալիքներուն մէջ ծաւի
 Թափեց արցունքն իր վընիտ.
 Պոռքկաց հըրայրին իր կսկիծի ու ցաւի,
 Ողբաց իր գարմն անօժիտ.

Առանձնութիւն, քախիծ՝ եղան շարունակ
 իր ընկերներն ամէնուր.
 Միտին՝ երագուն, մարգարէի՝ հանգունակ,
 Սիրտն՝ ակաղճուն տենչով հուր:

Պայրընական հանգստավայրն «ուքանկիւն»
 վայրն էր անոր սիրելի,
 Ուր դարերու կը լըսէր կանչն ու գանգիւն,
 Լի՝ հըմայֆովն անցեալի:

Ջիքենաւէտ «բըլուրին տակ Պայրընի»,
 Նստած՝ անխօս, երագուն,
 Կը յիշէր փաղցր անդաստաններն հայրենի
 Եւ արի գարմն հայկագուն:

Կը քագցընէր քախիծի կուժն արջնաքոյր
 վանկերու մոգն ալեհեր. —
 Հոգիին մէջ կ'այրէր ըստաշխն աղուաքոյր,
 Զայն մըշուշով կը պահէր:

Կը քեւէր միտին եքերն ի վեր անսահման,
 Սիրտն՝ աստղերու մէջ կուտակ,
 Հոգին՝ անծիր շաւիղներէն ոսկեման
 Ըսկուտեղին կապուտակ:

* * *

Խոր անդորրի մէջ կը նիրհէ հիմա նա,
 Պայֆաբէ վերջ տփնաջան.
 Բիլ ծովուն մօտ ընդմիշտ պառկած կը մընայ,
 Ծուփերուն դէմ անվախնան:

Կ'երգէ սոխակն հոն գեղգեղուն երգն իր հին,
 Դայլայլներով անպատում,

Ու կը ծագի լուսնակն Հայոց աշխարհին,
Կը պարզէ դէմքն իր տրտում.

Կը բերէ քովքն հայրենիքին իր սիրուն,
Սարին, քարին ու դարին,
Արարտի կանաչածածկ ուսերուն
Ու ձիւնամած կատարին.

Ամէն ամիս քաղցր իր մեղրով նորանոր
Կ'օծէ շիրիմը կնեայ.

Կը հսկէ լոյսն իր՝ անիւնին վրայ անոր. —
Անմահութեա՛ն հաւատչեայ:

Երեւան, 1961

ՊԵՏՐՈՍ ՄՈՐԵՆԻԿԵԱՆ

(Հատուած մը «Հաղորդուրին» ֆերբուքենէն)